Արձանագրություն 2

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի
Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.08.2020թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ՝**
Արամ Ասատրյան Տեխնիկական բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)
**Հանձնաժողովի անդամներ՝**
Արման Օհանյան Տեխնիկական բաժնի աշխատանքի անվտանգության գծով առաջատար ճարտարագետ (ԳՊ/ԳԱ)
Արման Գրիգորյան Տեխնիկական բաժնի աշխատանքի անվտանգության գծով առաջատար ճարտարագետ (ԳՊ/ԳԱ)
Վահե Գարեգինյան Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)
Գոռ Թադևոսյան Գնումների և մատակարարման բաժնի շուկայագետ (ԳՊ/ԲԱ)
**Գնումները համակարգող՝**
Դավիթ Գասպարյան Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

## Օրակարգ
## Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

**1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները**

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 01570843, էլ. հասցե՝ info@m2m.am
- «ՖԱԷՌԻՔՍ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 04725152, էլ. հասցե՝ firex77@mail.ru
- «Պոժմաստեր » ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 02265669, էլ. հասցե՝ pozhmaster@yahoo.com

1.2 Համակարգում 20.08.2020թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**2. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝ բացառությամբ «Մեյդ Թու Մեյք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|
| | ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1<br>ՕՊ – 4.5 տիպի կրակմարիչ | |
| | **Նախահաշվային գինը՝ 1104000 ՀՀ դրամ** | |
| «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ | 620833 | 745000 |
| «ՖԱԷՌԻՔՍ» ՍՊԸ | 990000 | 990000 |
| «Պոժմաստեր » ՍՊԸ | 1040000 | 1040000 |

14.08.2020 թ.-ին կատարվել է հարցում՝ կրակմարիչների տեխնիկական բնութագրի հետ կապված:

Հիմք ընդունելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից հրապարակված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով հրավերի 3-րդ կետի (հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգ) 3.3 ենթակետը՝ պարզաբանում չի տրամադրվել, քանի որ հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

5.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել.

- Ծանուցել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) արձանագրված անհամապատասխանությունները և ուղարկել davit.gasparyan@hven.am էլեկտրոնային հասցեին:

5.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի օգոստոսի 28-ին ժամը 17:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արամ Ասատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արման Օհանյան

Արման Գրիգորյան

Վահե Գարեգինյան

Գոռ Թադևոսյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան